— Նստեցէք, վարդապետ։

— Մենակ չեմ։ Հիւր եմ բերել։

— Թող հիւրն էլ հրամմէ։

— Փոքրահասակ մի մարդ։ Թուխ, գրեթէ սեւին մօտեցող մարմին։ Ճեղքուած, փայլուն աչքեր, երկայն թարթիչներով։ Ոսկեզօծ ակնոցներ եւ փայլուն նայուածք։ Հնդիկ։

— Դէ, խօսեցէք։ Հնդկաստանից եկած հայրենակից է, իսկ ես գործ ունեմ, պիտի գընամ։

— Ցտեսութիւն, վարդապետ։

— Ցտեսութիւն։

Հնդիկը մէջքը ծռում է, ձեռքը համբուրում եւ այդպէս մէջքը ծռած մնում է՝ մինչեւ որ վարդապետը մեկնի։

— Նստեցէք։

— Նեղութիւն չլինի։

— Էլ ի՞նչ նեղութիւն. նստեցէք։

— Չէ, ասում եմ, չլինի թէ...

— Չլինի թէ, որեւէ կերպով...

— Ո՛չ մի կերպով։

Նստում է։ Ձեռքերը ծալում ծունկերի վրայ։ Ճերմակ եղունգներ, մաղոտ ձեռքեր։

Լռում է։

Դուք Հնդկաստանի՞ց էք գալիս։

— Այո՛։

— Լաւ, զեղեցիկ երկիր է Հնդկաստանը, չէ՞։

— Այո՛։

Լռում է։

— Գործո՞վ էք եկել։

Լռում է։

— Գործո՞վ էք եկել։

Երկար, բիչ-բիչ նայում է ինձ։ Ցեռոյ, յանկարծ, անհանգիստ, կարծես օդի մէջ մի ճանճի թռչիւն է նայում։ Գլուխը վայր է ձըգում, հառաչում, ձեռքերը յուսահատօրէն սեղմում կրծքին, ու

— Պապագալնե՛ր...

— Ի՞նչպէս։

— Ա՛հ, մստր, պապագա՛յք։

Ցոյց է տալիս ձեղունի վրայ նկարուած թռչուններին։

— Թռչնայք բազում, գունագեղ եւ եղակի։

— Հա՞, նկարների մասին էք խօսում...

— Ոչ, մստր, ոչ։

— Ապա, ի՞նչ։

— Պապագալներս. պապագա՛յք եմ... կոկներս...

Մտածում եմ՝ մարդը խենթացել է։ Նըստում եմ անկողնիս վրայ. ո՞վ է իմանում ինչ կը լինի, ինչ չի լինի...

Նկատում է չփոթութիւնս։

— Պատմեմ, մստր, ասեմ ամենայն ինչ... Ու նախ, ասեմ համարձակութեամբ, իտալայք ձեր՝ մարդիկ են ստոր եւ արուռզ...

Աթոռը մօտեցնում է։ Աչքերը նետում է աչքերիս մէջ, ու շատ հեռուից սկսելով, միապաղաղ ձայնով, բոլոր մանրամասնութիւններին վրայ կանգ առնելով, ասես վաստաբանի մօտ է եկել, պատմում է։

— Երկար տարիներ աշխատել եմ։ Ունէի մայր, Աստուած հոգին լուսաւորեց, չունեմ օղլաղ։ Պատոյտ եկայ Հնդկաստան, գնացի Զամա եւ գնացի Սումատրա։ Դժուարին կեանք, մստր, չարքաշ կեանք։ Եւ մի օր էլ հաշիւ արի. ունէի մի քանի հարիւր փաունտ, անգլիական, դեղին ստերլիններ։ Կարեցի գօտի, շարեցի մէջը. կապեցի մարմնիս վրայ, օլռայք, մտածեցի՝ եւ հասայ ի Կալկաթա։ Անդ ունիմք համաշարիներ ազգի հայոց, որոնք վաճառականք եւ որոնք մեծահարուստ տղայք՝ ասեմ, ճշմարտապէս՝ բոլորովին անգլիացած ու հայոց ազգի համար եւ առաքելեայց մեր սուրբ եկեղեցւոյ համար ընդմիշտ կորած։ Անդ կայ մստր Զօն, առեւտրական հմուտ եւ նա խօսի հայերէն, բայց չուզի խօսել գռեհիկ բարբառն աշխարհարար, այլ ուզէ խօսիլ գրաբար եւ, որովհետեւ դժուար է եւ չգիտէ խօսիլ գրաբար՝ խօսի անգլուոյ կամ բէնգալի։ Գնացի մօտը, նստած էր եղեկտրական հովահարի մօտ եւ խիստ տաքի պատճառաւ պիտի քնէր, եթէ ես մտած չլինէի։ «Բարե՛ւ, մստր Զօն», ասացի։ «Բարեւ, մստր Մալքոմ, Բարեւ»։ Արթընցաւ, շատ զարմացաւ, թափրմիշ արեց կօքեյ եւ խօսեցանք։

Աչքերը պլզել է. գլուխը բոլորովին մօտեցրել ինձ եւ վախում է, չլինի թէ որեւէ իր խօսքը չլսեմ կամ չհասկանամ։

— Եւ խօսեցանք։ Ասացի. դու, մստր Զօն, վաճառական ես հմուտ եւ բազարի հետ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան